շինութեան բաժին տեղեացն Հայոց ։ Յորդորէին զնա առաքել զվարդապետս առ ամենայն ազգս Հայոց ժողովել զողորմութիւն 'ի նպաստ (Իմտատիէ) և առաքել առ Փոխանորդն 'ի Կոստանդինուպօլիս, զի բազմագումար ծախուց պէտս ունէր գործն. ապա խրախուսէին զնա չվհատիլ, այլ ապաւինիլ յԱստուած և յաղօթս, (1809. 'ի 19 Հոկտեմբերի)։

Կուսակալն Դամասկոսի Եուսուֆ Փաշա եկն յԵրուսաղէմ ըստ սովորութեան (յ7 Հոկտեմբերի), եւ զիջեալ յաղաչանս Յունաց, ետ հրաման նոցա շինել զԳերեզմանն Քրիստոսի փոքր գմբեթիւն իւրով. Լատինք և Հայք կամեցան բառնալ զկանթեղս և զպատկերս 'ի Գերեզմանէն գիտութեամբ այլազգեաց և օրինօք դատարանի, զի մի՛ յետոյ խռովութիւնս յարուցեն Յոյնք. այլ նոքա ոչ անսացեալ բանից նոցա, հանեալ զնոսա արտաքս և նախատանօք ընկեցին 'ի բաց ։ Հայք իբրեւ ծանուցին զայս կուսակալին Դամասկոսի, հրամայեաց նա օրինօք դատարանի գրել զամենայն ինչ, և յետ աւարտելոյ շինութեան կախել զիւրաքանչիւրսն 'ի տեղիս իւրեանց, որ և արարին այնպէս ։

Յոյնք կամեցան խափանել զհանդէսն Հայոց՝ զոր կատարէին յաւուր Գիւտի Խաչին, և պատճառանօք շինութեան լցին զարտաքին դուռն տաճարին քարամբք և հողով, և թէ՝ Հայք չունին այսուհետեւ մասն և բաժին աստ. բայց Կուսակալն ետ բառնալ անտի զքարինս և զհողն, և Հայք կատարեցին զհանդէսն իւրեանց ։ Ապա կոչեալ առ ինքն զգլխաւորս երից ազգաց և պատուիրեաց նոցա հաշտիլ սիրով և խաղաղութեամբ վարիլ ընդ միմեանս ։ Ա՛ռ զսահմանեալ տուրս յերից վանօրէից յայտնապէս, բայց 'ի ծածուկ 'ի Յունաց էառ 161,000 դահեկան վասն հրաման տալոյն շինութեան, և խոստացան եւս բազում ինչ եթէ թոյլ տացէ յափշտակել զբաժին տեղիս Հայոց եւ Լատինաց, այլ նա սաստեաց նոցա, և չարար վնաս ինչ տեղեացն այլոց ։ Ապա 'ի սադրելոյ Յունաց եւ յերկիւղ այլազգեաց՝ եթող 'ի քաղաքի անդ 200 զօրականս. զ100 եդ 'ի բերդն և զ100 բնակեցոյց յիջեւանս քաղաքապետին, և ինքն մեկնեցաւ 'ի տեղի իւր ('ի 18 Նոյեմբերի),